Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 287-Ա ԵՎ 288-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 287-Ա որոշման 3-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Թիվ 288-Ա որոշմամբ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության 0.067631 հեկտար մակերեսով հողամասը, առանց հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու, օտարվել է ուղղակի վաճառքի միջոցով:

Որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) ենթակետի պահանջներին:

Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
07.02.2020թ.